

Մրցույթ` ՀՀ Սյունիքի մարզի «Որոտանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հետևյալ առարկաների ուսուցչի թափուր տեղ/երի համար

1. Ֆիզիկա` (3 ժամ, 16554դ)
2. Քիմիա` (3 ժամ 16554դ)
3. Կենսաբանություն` (2 ժամ, 16554դ)
4. Ինֆորմատիկա` (1,75 ժամ, 9656դ)
5. Կերպարվեստ` (0,25 ժամ, 1379դ)
6. Հայ եկեղեցու պատմություն` (2,75 ժամ, 15175դ)
7. Հայոց պատմություն` (3.5 ժամ, 19313դ)
8. Հայրենագիտություն` (2 ժամ, 11036դ)
9. Համաշխարհային պատմություն` (1.75 ժամ, 9656 դ)
10. Հասարակագիտություն` (0,5 ժամ, 2759դ)

Մրցույթն անցկացվում է երկու փուլով` թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է` ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել`

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան` աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները` ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները` նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում` հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022թ` հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր` ժամը 10:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. նոյեմբերի 10-ին` ժամը 13:00-ին**, «Որոտանի հիմնական դպրոց» **ՊՈԱԿ-ում**, հասցե` ՀՀ Սյունիքի մարզ, Մխիթանի համայնք, բնակավայր Որոտնավան: Տեղեկությունների համար զանգահարել 077883089 հեռախոսահամարով: